ՑՆԾԵՐԳ

Գարուն, բարով եկար նորէն,
Ինչե՞ր բերիր դուն անցեալէն,
Ի՞նչ զանակներ իմ յուշերէն,
Ի՞նչ ծաղիկներ հին փըշերէն,
Ի՞նչ ասուպներ իմ գիշերէն,
Ի՞նչ ծիածան իմ յոյսերէն.
Եկուր Գարուն, սեղան փըռեմ,
Հին օրերու գինին բերեմ,
Քեզ՝ հետ պահ մը երգեմ–պարեմ:

Գարուն, բարով եկար նորէն,
Ճամբուդ՝ կանանչ գորգեր փըռեմ,
Քեզի շուշան ու վարդ բերեմ,
Ծաղիկներու շարոց շարեմ,
Նոր հարսի պէս քեզ՝ զարդարեմ:

Գարուն, բարով եկար նորէն,
Քեզի լազուարդ կապայ կարեմ,
Վըրան բիւրեղ աստղեր շարեմ,
Ամպերէն վար մերթ ջուր բերեմ,
Քեզ՝ լոգցընեմ, լըւամ, սանտրեմ:

Գարուն, բարով եկար նորէն,
Զոյգ ջահեր քեզ՝ համար վառեմ,
Դէմքդ հոգւոյս մէջ նըկարեմ,
Պատկերդ կըրծքիս ներքեւ կըրեմ,
Սըրտիս սիրով քեզ՝ վարարեմ:

Գարուն, բարով եկար նորէն,
Կեցիր քիչ մը քեզ՝ վայելեմ,
Օրրան կախած սա նըզդերէն
Իմ մանկացած սիրտս օրօրեմ.
Գարուն, բարով եկար նորէն,
Նըստէ խօսինք հին օրերէն,
Հին երազներն՝ պար բոլորեն,
Մենք արբենանք հին նեկդարէն.
Գարուն, բարով եկար նորէն,
Գարուն, բարով եկար նորէն:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@